ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 6, 1958 Общественные науки

Վ. Զատիկյան

# ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ[1]

Ապրանքային արտադրության պայմաններում նյութական բարիքների փոխանակությունը կատարվում է առևտրի միջոցով։

Մեր տնտեսագիտական գրականության մեջ հաճախ հանդիպում ենք այն մտքին, թե սովետական առևտուրը սպառման առարկաների բաշխման հիմնական ձևն է։ Դա սխալ չէ, որովհետև այդ սահմանումը խոսում է այն մասին, որ ՍՍՌՄ-ում ժողովրդական սպառման ապրանքներն սպառողներին են հասցրվում և բաշխվում գլխավորապես սովետական առևտրի միջոցով։ Բնամթերային բաշխումը, որ կատարվում է կոլտնտեսություններում կոլտնտեսականների վաստակած աշխատանքի դիմաց, երկրի սպառման առարկաների ամբողջ բաշխման մեջ համեմատաբար փոքր տեսակարար կշիռ ունի։ Սպառման առարկաների գերակշռող մասն ազգաբնակչությանն է հասնում առք ու վաճառքի միջոցով, այսինքն՝ սովետական առևտրի միջոցով։ Սակայն, պետք է ասել, որ սովետական առևտրի վերը հիշված սահմանումը թերի է, որովհետև այդ սահմանումը ոչինչ չի ասում ապրանքները բնակչության դրամական եկամուտների հետ փոխանակելու մասին, որը սովետական առևտրի հիմնական ֆունկցիան է։ Ուստի, մեր կարծիքով, սովետական առևտրի սահմանումը պետք է ձևակերպել հետևյալ կերպ. Սովետական առևտուրը հանդիսանում է ժողովրդական սպառման առարկաների բաշխման և ապա՝ փոխանակության իրականացման ձև։ Սովետական առևտրի նման բնութագրումը, մեր կարծիքով, բավարարում է հարցի թե մեկ և թե մյուս կողմը. առաջին՝ սովետական առևտուրը բաշխման միջոց է, որ օգտագործում է սոցիալիստական պետությունը կոմունիստական հասարակության առաջին փուլում, այսինքն՝ սոցիալիզմի ժամանակ, և երկրորդ՝ սովետական առևտրի կանալների միջոցով է, որ ժողովրդական սպառման առարկաները փոխանակվում են աշխատավորների դրամական միջոցների հետ, նրանց անձնական կարիքները բավարարելու նպատակով։

Ընդլայնված վերարտադրության մոմենտների միջև եղած փոխադարձ կապն ու պայմանավորվածությունը բացահայտելիս Մարքսը ցույց է տալիս, որ արտադրությունը վերարտադրության պրոցեսի ոչ միայն ելակետն է, որովհետև բաշխելու, փոխանակելու և սպառելու համար նախ պետք է արտադրել, այլև տիրապետում է վերջիններիս վրա։ Արտադրությունը ոչ միայն նյութ, առարկա է տրամադրում փոխանակությանը, այլև որոշում է նրա բնույթը, էությունը, ծավալը։ Արտադրության աճը բերում է փոխանակության ոլորտի ապրանքաշրջանառության ծավալի մեծացում։

---

[1] Տվյալ հոդվածում քննարկվում են սովետական առևտրի և արդյունաբերության փոխհարաբերությունների միայն այն հարցերը, որոնք կապված են ժողովրդական սպառման ապրանքների արտադրության ու վաճառքի հետ։

Սակայն մարքսիզմ-լենինիզմը միաժամանակ ուսուցանում է, որ վերարտադրության ամբողջական պրոցեսի մեջ փոխանակությունը ինչ-որ պասսիվ մոմենտ չէ, այլ, ընդհակառակը, իր հերթին ներգործում է արտադրության վրա, խթանում է արտադրությունը։

Խոսելով արտադրության ու փոխանակության փոխհարաբերության մասին Էնգելսը «Անտի-Դյուրինգում» գրում է, որ «...ամեն մի տվյալ մոմենտին այդ ֆունկցիաները (արտադրությունն ու փոխանակությունը — Վ. Զ.) պայմանավորում են միմյանց և ներգործում միմյանց վրա այն աստիճան, որ նրանց կարելի է տնտեսական կորագծի արսցիս ու օրդինատ անվանել»[1]։ Մի ուրիշ տեղ, այն է՝ 1890 թ. հոկտեմբերի 27-ին Շմիդտին գրած նամակում, Էնգելսը կրկին ընդգծում է վերարտադրության պրոցեսում փոխանակության (առևտրի) ակտիվ դերը և նրա ներգործությունը արտադրության վրա։ «...Հենց որ մթերքների առևտուրը անջատվում է բուն իմաստով արտադրությունից, նա հետևում է իր սեփական շարժմանը... Այդ շարժումն ունի իր սեփական փուլերը, և նա (առևտուրը — Վ. Զ.) իր հերթին հակադարձ ազդեցություն է գործում արտադրության շարժման վրա»[2]։

Եվ իսկապես, կապիտալիզմի զարգացման արշալույսին, առևտրական և արդյունաբերական կապիտալների միջև ֆունկցիաների բաշխման պայմաններում առևտուրը որոշակի դեր է խաղացել արտադրության կապիտալիստական եղանակի նախապատրաստման ու զարգացման գործում։ Նա հանդես է եկել որպես կապիտալի նախասկզբնական կուտակման աղբյուր։ Սակայն կապիտալիզմի զարգացման հետ միասին գնալով խորանում է արտադրության հասարակական բնույթի և արդյունքների յուրացման մասնավոր բնույթի միջև եղած հակասությունը, խորանում է բնակչության պահանջարկի և ապրանքների առաջարկի միջև եղած ճեղքվածքը, պահանջը խիստ հետ է մնում առաջարկից, նեղանում են ապրանքների իրացման շրջանակները, դանդաղում է ապրանքաշրջանառությունը։ Ապրանքաշրջանառության դանդաղումը կաշկանդում է արտադրությունը, նվազում է առևտրի ներկործոն դերը վերջինիս վրա։

Սոցիալիզմի պայմաններում, որտեղ արտադրությունն ու առևտուրը խարբսխվում են արտադրության միջոցների ու արդյունքների սոցիալիստական սեփականության վրա, ժողովրդական տնտեսությունը զարգանում է պլանաչափորեն, բացակայում են կապիտալիզմին հատուկ հակամարտ հակասություններն արտադրության և սպառման, արտադրության ու առևտրի միջև։ Արտադրության և առևտրի կապը իրականացվում է ոչ թե տարերայնորեն, ինչպես դա տեղի է ունենում կապիտալիզմի ժամանակ, այլ պլանային ձևով։

Սովետական առևտուրն իր էությամբ ու բնույթով կախված լինելով սոցիալիստական արտադրության էությունից ու բնույթից, ակտիվ ներգործում է արտադրության վրա, նպատակ ունենալով արտադրվող ապրանքների որակի բարձրացման, ասորտիմենտի ընդարձակման ու բարելավման միջոցով արագացնել ապրանքաշրջանառությունը ու դրանով իսկ խթանել արտադրությունը։ Ապրանքներն արտադրությունից սպառողներին հասցնելով ու նրանց դրամական եկամուտների հետ փոխանակելով, սովետական առևտուրը իր ավարտին է հասցնում հասարակական արդյունքի այն մասի շրջապտույտը, որ ծառա-

[1] Ֆ. Էնգելս. Անտի-Դյուրինգ, 1952, էջ 187։
[2] Կ. Մարքս, Ֆ. Էնգելս. Նամակներ «Կապիտալի» մասին, 1954, էջ 333։

յում է անձնական սպառման համար, դրանով իսկ նա նոր շրջապտույտի սկիզբ է դնում և խթանում արտադրության հետագա ընդլայնումը։

Սակայն ՍՍՌՄ-ում սոցիալիստական արտադրահարաբերությունների հողթնակի պայմաններում, երբ բացակայում են ապրանքների իրացման դժվարությունները, երբ տեղի է ունենում ներքին շուկայի տարողության սիստեմատիկ աճը՝ պայմանավորված, մի կողմից, արտադրության անընդհատ ընդլայնմամբ, մյուս կողմից, բանվոր-ծառայողների քանակի, քաղաքի և գյուղի աշխատավորության դրամական եկամուտների ավելացմամբ, ահա այս պայմաններում էլ չի կարելի ասել, թե մեզ մոտ յուրաքանչյուր ապրանքին հատուկ է ավտոմատիկ իրացում։

Շնորհիվ տնտեսության սոցիալիստական սիստեմի առավելությունների ու սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքի գործողության, ՍՍՌՄ-ում աշխատավորների գնողունակության սիստեմատիկ աճի հետ միասին անընդհատ բարձրանում են ապրանքների քանակի, որակի, ասորտիմենտի նկատմամբ բնակչության պահանջմունքները։ Այստեղից հետևում է, որ արդյունաբերական այն ձեռնարկություններ են կարող իրենց ապրանքային արտադրանքը ժամանակին իրացնել և ապահովվել հիմնական ու շրջանառու միջոցներով, որոնց արտադրանքը համապատասխանում է սպառողների, ներքին շուկայի պահանջներին։ Միայն այդ դեպքում է ընդարձակվում ներքին շուկան, արագանում շրջանառության պրոցեսը, կրճատվում վերարտադրության ցիկլը և բարձրանում սոցիալիստական էկոնոմիկայի զարգացման տեմպերը։

Որպեսզի տեղի ունենա վերարտադրության պրոցեսը, և այն էլ ընդլայնված մասշտաբով, անհրաժեշտ է, որ հասարակական արդյունքն անընդհատ իրականացնի իր շրջապտույտը։ Դրա հետ միասին պետք է ստեղծվի նոր արժեք՝ անհրաժեշտ և հավելյալ պրոդուկտի ձևով՝ անձնական և հասարակական սպառման ու կուտակման կամ ընդլայնված վերարտադրության իրականացման համար։

Հայտնի է, որ սոցիալիստական արդյունաբերական ու առևտրական ձեռնարկությունների գերակշռող մասը աշխատում է տնտեսական հաշվարկի հիման վրա։ Այդ նշանակում է, որ նրանց ֆինանսա-տնտեսական բոլոր ցուցանիշները կախված են տնտհաշվարկի ամրապնդումից։ Տնտեսական հաշվարկի գլխավոր նպատակն այն է, որ ձեռնարկությունն իր գործունեության ընթացքում սեփական եկամուտների հաշվին կատարի ծախսերը և դրա հետ միասին ապահովի պլանային եկամտաբերությունը։ Իսկ այդ նշանակում է, որ ձեռնարկությունները պետք է ոչ միայն արտադրության պլանը կատարեն, այլև ժամանակին իրացնեն արտադրանքը։

Տնտեսական հաշվարկը միաժամանակ պարտավորեցնում է առևտրական կազմակերպություններին ու ձեռնարկություններին հաշվի առնել այն սպառողների պահանջները, որոնք հրաժարվում են վերցնել վատորակ, հնացած մոդայի ապրանքներ։ Ուստի առևտրական ձեռնարկությունները, ժամանակին ու բազմակողմանի ուսումնասիրելով բնակչության գնողունակությունն ու պահանջները, պետք է ակտիվ ներգործեն արտադրական ձեռնարկությունների վրա, բարձրացնեն իրենց պահանջկոտությունը արտադրվող ապրանքների ասորտիմենտի և որակի նկատմամբ և դրանով իսկ ապահովեն բնակչության հարաճուն պահանջների բավարարումը։

Ուժեղացնելով իրենց ներգործությունն արտադրության վրա, սովետական առևտրի կազմակերպությունները չպետք է թույլ տան, որ առևտրական ցանց մուտք գործեն վատորակ՝ պետական ստանդարտին ու տեխնիկական պայմաններին չհամապատասխանող ապրանքներ։ Սովետական առևտրի կանալներում ապրանքների կուտակման հետևանքով, երբ դա չի պայմանավորված անհրաժեշտ պլանային պաշարների ստեղծմամբ, կարող են թուլանալ, կաշկանդվել սոցիալիստական ընդլայնված վերարտադրության տեմպերը, սովետական ժողովրդի կենսամակարդակի աճը։ Սովետական առևտուրը, Մ. Ի. Կալինինի պատկերավոր բառերով ասած, պետք է դրդիչ միկրոբ հանդիսանա արտադրության համար, ստիպի նրան արտադրելու բազմապիսի ապրանքներ, որոնք կարող են բավարարել սպառողների պահանջները. նա պետք է բացահայտի արդյունաբերության ներքին ռեզերվներն ու դրանով իսկ առաջ մղի սպառման առարկաների արտադրությունը։

Սոցիալիստական հասարակարգում արտադրանքի որակի բարձրացումն ունի խոշոր ժողովրդատնտեսական նշանակություն։ Նա հնարավորություն է տալիս երկարացնել ապրանքի օգտագործման ժամկետը, իսկ հասարակական մասշտաբով դա նշանակում է հումքի, նյութերի, աշխատանքի խնայողություն, ինչպես նաև արտադրական կարողությունների ռացիոնալ օգտագործում։ Այս կամ այն ձեռնարկության արտադրանքի որակն այն կարևոր սինթետիկ ցուցանիշներից մեկն է, որը բնութագրում է տվյալ ձեռնարկության աշխատանքը. նորագույն տեխնիկան ու տեխնոլոգիան օգտագործելու աստիճանը, աշխատանքը կազմակերպելու որակը։ ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի 1957 թ. մայիսյան սեսիայում «Արդյունաբերության ու շինարարության կառավարումն է՛լ ավելի կատարելագործելու մասին» իր զեկուցման մեջ Ն. Ս. Խրուշչովը օրինակ բերեց, թե ինչպես 1955—1956 թթ. արդյունաբերության կողմից բաց թողնված խոտանի պատճառով մեր ժողովրդական տնտեսությունը ունեցել է 6 մլդ ռուբլու վնաս։ Հասկանալի է, որ այդ վնասները ծածկվել են այն միջոցների հաշվին, որոնք կարող էին լրացուցիչ աղբյուր լինել աշխատավորների նյութական ու կուլտուրական պայմանների է՛լ ավելի բարձրացման համար։ Ահա թե ինչու արտադրանքի որակը բարձրացնելու, ասորտիմենտը ընդարձակելու ու բարելավելու համար մղվող պայքարը միաժամանակ պայքար է սովետական ժողովրդի կենսամակարդակի հետագա բարձրացման համար։

Հետպատերազմյան տարիներին ժողովրդական սպառման առարկաների աճման հետ միասին ռեսպուբլիկայի արտադրական ձեռնարկությունները, շնորհիվ արտադրության տեխնոլոգիայի բարելավման, նորագույն տեխնիկայի արմատավորման, զգալիորեն բարձրացրել են թողարկվող ապրանքների որակը, ընդլայնել ու բարելավել են նրանց ասորտիմենտը։ 1940 թ. համեմատությամբ, ռեսպուբլիկայի թեթև արդյունաբերության արտադրանքն 1956 թ. ավելացավ գրեթե հինգ անգամ, սննդի արդյունաբերությունը՝ 2, 3 անգամ։ Ընդ որում այդ ժամանակաշրջանում բրդյա կտորների արտադրությունը ռեսպուբլիկայում ավելացավ 173 անգամ, մետաքսյա կտորներինը՝ 27 անգամ, կաշվե կոշկեղենինը՝ 3,3 անգամ, խաղողի գինու՝ 6,5 անգամ, պանրինը՝ 3,8 անգամ, կենդանական յուղինը՝ ավելի քան 3 անգամ, մսինը՝ (արդյունաբերական վերամշակում) 3 անգամ, երշիկեղենինը՝ 4,2 անգամ և այլն[1]։

---

[1] „Народное хозяйство Армянской ССР", стат. сборник, 1957, стр. 39—50.

Հետպատերազմյան տարիներին սպառման ապրանքների արտադրության ձեռնարկությունների կոլեկտիվները, արձագանքելով Մոսկվայի «Կրասնայա շվեյա» ֆաբրիկայի վարպետ Պոլինա Սուխովերխովայի, «Կրասնի Բոդատիր» գործարանի վարպետ Կլավդիա Զենովայի և արտադրության այլ առաջավորների հայրենասիրական շարժմանը, պայքար ծավալեցին թողարկվող ապրանքների որակի բարձրացման, ասորտիմենտի ընդարձակման ու բարելավման համար։ Ռեսպուբլիկայի շատ ձեռնարկությունների ղեկավարներ, ինժեներներ ու բանվորներ, իրենց գործարանի մարկան բարձր պահելու նպատակով, ձգտում են ոչ միայն ավելացնել արտադրության քանակը, կատարել ասորտիմենտային պլանները, այլև պայքարում են այն բանի համար, որպեսզի արտադրվող ապրանքները լինեն բարձրորակ, ունենան գեղեցիկ ու դուրեկան տեսք։

Սակայն ռեսպուբլիկայում քիչ չեն և այնպիսի ձեռնարկություններ, որոնց արտադրանքի որակը ցածր է, չի բավարարում բնակչության պահանջներին։ Մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ արտադրում և առևտրական ցանցին են մատակարարում շատ ապրանքներ, որոնք չեն համապատասխանում պետական ստանդարտներին ու տեխնիկական պայմաններին։ Այսպես, օրինակ, Հայկական ՍՍՌ հացաթխման մի շարք ձեռնարկություններում 1957 թ. 4-րդ եռամսյակում ստուգված 1766 տոննա հացից 90 տոննան եղել է խոտան, որից Լենինականի № 1 հացի գործարանում՝ 15,8 տոննա, № 2 գործարանում՝ 8 տոննա, Երևանի № 1 հացի գործարանում՝ 10,8 տոննա, № 3-ում՝ 5 տոննա, № 4 մեխանիկական փռում՝ 7 տոննա և այլն։ Այդ ձեռնարկություններում թույլ են տրվում տեխնոլոգիայի կոպիտ խախտումներ, չեն ապահովվում պետական ստանդարտներն ու տեխնիկական պայմանները։

Ռեսպուբլիկայի մսի կոմբինատներում խիստ անբավարար պայքար է տարվում երշիկեղենի որակի բարձրացման ուղղությամբ։ Հայկական ՍՍՌ Առևտրի մինիստրության ապրանքների որակի ռեսպուբլիկական վարչության կողմից 1957 թ. 4-րդ եռամսյակում մսի արդյունաբերական ձեռնարկություններում և առևտրի ցանցում ստուգված 344 տոննա երշիկեղենից՝ 8,1 տոննան եղել է խոտան։ Թույլ են տրվում երշիկի պատրաստման տեխնոլոգիական պրոցեսների խախտումներ։

Պետական ստանդարտների, տեխնիկական պայմանների խախտման ու վատորակ ապրանքների արտադրության բազմաթիվ փաստեր կարելի է բերել նաև ռեսպուբլիկայի ոչ սննդային ապրանքներ արտադրող արդյունաբերական ձեռնարկություններից։ Ահա դրանցից մեկը։ 1957 թ. 4-րդ եռամսյակում ռեսպուբլիկայի արդյունաբերական ու առևտրական ձեռնարկություններում ստուգման ենթարկված 1193 հատ պատրաստի հագուստեղենից 436 հատը ենթարկվել է խոտանման արտադրական կամ արատներ ունենալու պատճառով։

Ժողովրդական սպառման վատորակ ապրանքների արտադրության գլխավոր պատճառներն, մեր կարծիքով, հետևյալներն են. առաջին՝ որ ռեսպուբլիկայի արդյունաբերական առանձին ձեռնարկությունների ղեկավարները համախառն պլանի անպայման կատարումը ապահովելու նպատակով անհրաժեշտ ուշադրություն չեն դարձնում արտադրանքի որակի վրա։ Երկրորդ՝ որ արդյունաբերական շատ ձեռնարկություններում արտադրանքի բացթողումը կատարվում է գրոհականության պայմաններում, երբ ամսվա, եռամսյակի

կամ տարվա պլանների կատարումը ձեռնարկությունների ղեկավարները ձգտում են ապահովել միայն վերջին շրջանում։ Եվ իհարկե, այսպիսի պայմաններում էլ ի՞նչպես մտածել արտադրանքի որակի մասին։ Երրորդ, որ ռեսպուբլիկայի մի շարք ձեռնարկությունների ղեկավարներ վատ են պատկերացնում պետության, հասարակության նկատմամբ իրենց ունեցած պատասխանատվությունը, մոռացել են ՍՍՌՄ Գերագույն Սովետի 1940 թ. հուլիսի 10-ի՝ «Արդյունաբերական ձեռնարկությունների կողմից բաց թողնված ցածրորակ կամ ոչ կոմպլեկտավորված արտադրանքի, ինչպես նաև պարտադիր ստանդարտների չպահպանման համար պատասխանատվության մասին» որոշումը, որը նախատեսում է դատական պատասխանատվության ենթարկել արդյունաբերական այն ձեռնարկությունների դիրեկտորներին, գլխավոր ինժեներներին, տեխնիկական վերաստուգման բաժինների վարիչներին, որոնք բաց են թողնում վատորակ կամ չկոմպլեկտավորված, ինչպես նաև պարտադիր ստանդարտներին չհամապատասխանող արտադրանք՝։

Ժողովրդական սպառման առարկաներ արտադրող ձեռնարկությունների կոլեկտիվները պետք է ակտիվ պայքար տանեն իրենց գործարանի, ֆաբրիկայի, արտելի հեղինակությունը բարձրացնելու համար, բարձր պահեն ձեռնարկության մարկան։

Սովետական առևտրի կազմակերպություններն ու ձեռնարկությունները արտադրության վրա ներգործում են տնտեսական այնպիսի լծակների միջոցով, ինչպիսիք են՝ մատակարարողների հետ կնքվող պայմանագրերը, պայմանագրային պարտավորությունները չկատարելու դեպքում կիրառվող ֆինանսական սանկցիաները, ապրանքների արտադրության նախնական պատվերների սիստեմը, վատորակ ապրանքների ընդունումից հրաժարվելու իրավունքը և այլն։

Սոցիալիստական արտադրության վրա սովետական առևտրի ներգործման կարևոր լծակներից մեկը տնտեսական պայմանագիրն է, որը կնքվում է առևտրական և արտադրական ձեռնարկությունների միջև համապատասխան ասորտիմենտի ու որակի ապրանքներ մատակարարելու մասին։ Տնտեսական պայմանագիրը հանդիսանում է սոցիալիստական ձեռնարկությունների միջև եղած փոխհարաբերությունների հիմքը և ելնում է պետական ժողովրդա-տնտեսական պլանի պահանջներից։ Նա կարևոր միջոց է սոցիալիստական ձեռնարկությունների միջև տնտեսական կապեր իրականացնելու, ժողովրդատնտեսական պլանների կատարման նպատակով նրանց գործունեության վրա վերահսկողությունն ուժեղացնելու տեսակետից։ Այդ պայմանագիրը սովորաբար կնքում են, տնտհաշվարկային ինքնուրույնություն ունեցող ձեռնարկությունները։

Տնտեսական պայմանագրերը հնարավորություն են տալիս պլանային կարգով բաշխել երկրի ապրանքային ֆոնդերը, խթանել ձեռնարկությունների տնտեսական հաշվարկի ամրապնդումը՝ ինչպես արտադրության, այնպես էլ շրջանառության ոլորտում։

Տնտեսական պայմանագրերում նախատեսված պարտավորությունների կատարումը պարտադիր է կողմերից թե՛ մեկի և թե՛ մյուսի համար։ Պայմանագրերում նախատեսվող պարտավորությունների չկատարելը կամ նրանց

[1] „Сборник законов и указов Президиума Верховного Совета СССР (1938—1944)". 1945, стр. 242.

թերի կատարելը կարող է առաջացնել ֆինանսական սանկցիաների կիրառում թե՛ մատակարարող և թե՛ իրացնող կազմակերպությունների նկատմամբ։ Եվ, իսկապես, պրակտիկայում հաճախ է պատահում, երբ արտադրական ձեռնարկությունները կոպիտ կերպով խախտում են առևտրական կազմակերպությունների հետ կնքած տնտեսական պայմանագրերը։ Այսպես, օրինակ, հայժողտնտխորհի թեթև արդյունաբերության վարչության Լենինականի № 2 կոշիկի ֆաբրիկան ցածրորակ ապրանքներ արտադրելու համար 1956 թ. միայն 9 ամիսների ընթացքում առևտրական կազմակերպություններին վճարել է ավելի քան 51 հազար ռուբլու տուգանք և տույժ։

Այստեղ անհրաժեշտ է նշել մի կարևոր հանգամանք։ Որոշ դեպքերում արդյունաբերական առանձին ձեռնարկություններ գիտակցաբար չեն հրաժարվում նախատեսված տույժերը և տուգանքները վճարելուց, որպեսզի դրանով իսկ հնարավորություն ունենան իրացնելու իրենց վատորակ ապրանքը։ Այսպիսի դեպքերում առևտրական կազմակերպություններն ու ձեռնարկությունները պետք է կտրականապես հրաժարվեն նման ապրանքներ ընդունելուց, հենվելով պետության կողմից նրանց տրված իրավունքի վրա։ Չգալով «ռուբլու հարվածը» արդյունաբերական ձեռնարկությունը ստիպված կլինի վերանայել իր աշխատանքները, բարելավել արտադրության տեխնոլոգիան և բարձրացնել արտադրանքի որակը։

Պետք է ասել, որ ռեսպուբլիկայի առևտրական կազմակերպություններից շատերը վատ են կատարում ՍՍՌՄ Առևտրի մինիստրության հրամանները (1956 թ. ապրիլի 15-ի № 333-ը, 1957 թ. հոկտեմբերի 17-ի № 450-ը), որոնք արգելում են ընդունել և վաճառքի հանել անորակ, ստանդարտներին չհամապատասխանող ապրանքներ։ Առևտրական կազմակերպությունները անհրաժեշտ պայքար չեն ծավալում այն ձեռնարկությունների դեմ, որոնք սիստեմատիկաբար արտադրում և առևտրական ցանց են մատակարարում ցածրորակ ապրանքներ։

Ռեսպուբլիկայի առևտրական շատ ձեռնարկությունների՝ բաղաների պահեստների, խանութների աշխատողները և նրանցից գլխավորապես, ապրանքագետները, անհրաժեշտ պահանջկոտություն չեն ցուցաբերում ապրանքների որակական ստուգումների ժամանակ։ Այսպես, օրինակ, 1957 թվականի 4-րդ եռամսյակում ապրանքների որակի ռեսպուբլիկական վարչության կողմից՝ 239 առևտրական ձեռնարկություններում (բաղաներ, պահեստներ, խանութներ) կատարված կոնտրոլ ստուգումների ժամանակ խոտանվել ու վաճառքից հանվել են 1060 հազար ռուբլու գանազան սննդային և ոչ սննդային ապրանքներ։

Արտադրության վրա սովետական առևտրի ներգործման կարևոր օղակ է հանդիսանում մեծաքանակ առևտուրը։

Ըստ ապրանքային առանձին խմբերի մեծաքանակ առևտրի մասնագիտացումը հնարավորություն է տալիս ավելի ակտիվորեն պայքարելու ապրանքների որակի բարձրացման, ասորտիմենտի ընդլայնման ու բարելավման ուղղությամբ։ Մինչդեռ փորձը ցույց է տալիս, որ մեծաքանակ առևտրի տեղական կազմակերպություններն անբավարար են կատարում իրենց դերը։ Այսպես, օրինակ, 1957 թ. առաջին եռամսյակում «Գլավգալանտերեայի» հայկական բազայի պահեստներում կատարած ստուգման ժամանակ 975 անուն գալանտերեական ապրանքներից, որոնք բոլորն էլ որակավորված էին որպես առաջին սորտ, 67-ը իջեցվեց երկրորդ սորտի, 123-ը՝ երրորդ սորտի, 36-ը նախա-

տեսվեց վերադարձնել մատակարարին վերամշակելու համար, իսկ 555 անուն ապրանքներ ենթարկվեցին խոտանման պետական ստանդարտներին չհամապատասխանելու պատճառով։ Այդպիսի օրինակներ կարելի է բերել նաև մեծաքանակ առևտրի մյուս կազմակերպությունների փորձից։ Պետք է ասել, որ նրանցից շատերը հատկապես ապակենտրոնացած գնումները կատարում են առանց բնակչության պահանջարկի խոր ուսումնասիրության, իսկ առանձին դեպքերում էլ ռեսպուբլիկայից դուրս այնպիսի ապրանքներ են գնում, որոնք արտադրվում են նաև տեղում։

* * *

Ապրանքների որակի համար տարվող պայքարը մեծ չափով կախված է առևտրական բազաների, պահեստների ու մանրածախ ցանցի նյութատեխնիկական հագեցվածության աստիճանից, այդ ապրանքների պահպանումից։ Քիչ չեն եղել դեպքեր, երբ բարձրորակ ապրանքները՝ ժամանակին չիրացնելու և վատ պահպանման հետևանքով, կարճ ժամանակամիջոցում կորցնում են իրենց որակը։

Ապրանքների պահպանման գործը հատկապես վատ է կազմակերպված մեծաքանակ առևտրի ու Հայաստանի սպառողական կոոպերացիայի մի շարք ձեռնարկություններում։

Ապրանքների որակի իջեցման պատճառներից մեկն էլ այն է, որ առևտրական ստորին ցանցի աշխատողներից շատերը չգիտեն ապրանքների պահպանման տարրական կանոնները, ապրանքագիտության հասարակ հարցերը։ Առևտրական շատ բազաներում ու խանութներում բացակայում են պետական ստանդարտները, ապրանքների տեխնիկական պայմանները, իսկ եթե կան էլ, առևտրի շատ աշխատողներ նրանցից օգտվել չեն կարողանում։

Սովետական առևտրի ձեռնարկությունների տեխնիկական հագեցվածությունը բարձրացնելու հետ միասին անհրաժեշտ է բազաներում և մանրածախ ցանցում կազմակերպել մշտական գործող սեմինարներ՝ ապրանքագիտության, առևտրի կազմակերպման ու տեխնիկայի առանձին հարցերը ուսումնասիրելու համար։ Տեխմինիմումի անցկացման այժմյան պրակտիկան ցույց է տալիս, որ դա անհրաժեշտ չափով չի օգնում առևտրի ստորին օղակների աշխատողներին՝ բարձրացնելու իրենց տեսական ու գործնական գիտելիքները։ Մշտական գործող սեմինարներում անհրաժեշտ է ապահովել ապրանքների որակի ռեսպուբլիկական վարչության և էքսպերտ բյուրոյի աշխատողների մասնակցությունը։

Ռեսպուբլիկայի Առևտրի մինիստրության ապրանքների որակի վարչության և էքսպերտ բյուրոյի աշխատողները կոնսուլտացիաների միջոցով պետք է օգնեն առևտրական կազմակերպություններին ապրանքների պահպանման, փաթեթավորման, տեղափոխման, ինչպես նաև պայմանագրային պարտավորությունների խախտման դեպքում սահմանված ֆինանսական սանկցիաները կիրառելու հարցերը լուծելիս։

Երկրի ժողովրդական տնտեսության շահերից ելնելով պետք է ավելի ընդլայնել ռեսպուբլիկայի Առևտրի մինիստրության ապրանքների որակի վարչության իրավունքները, բարձրացնել նրա հեղինակությունը, թույլ տալ նրան՝ պլանային ստուգումների հետ միասին՝ հանկարծակի ստուգումներ կատարել արդյունաբերական ու առևտրական դանազան ձեռնարկությունների պահեստ-

ներում, ինչպես նաև պահանջել առևտրական կազմակերպություններից անթերի կատարել վարչության հրամանները, չընդունել վարչության կողմից արտադրական ձեռնարկությունների արգելված արտադրանքը և այլն։

Մեր կարծիքով արտադրանքի որակի համար մղվող պայքարը ուժեղացնելու տեսակետից նպատակահարմար է, որպեսզի առևտրական ցանց մուտք գործող յուրաքանչյուր ապրանքային պարտիայի անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին լինի նաև Ապրանքների որակի ռեսպուբլիկական վարչության թույլտվությունը՝ նրանց վաճառքի մասին։ Պետք է ասել, որ ժողովրդական դեմոկրատական երկրներից շատերում այդպիսի պրակտիկայի կիրառումը տվել է իր դրական էֆեկտը։ Այդպիսի պրակտիկան հատկապես մեծ կիրառում ունի Չեխոսլովակիայի ժողովրդական ռեսպուբլիկայում[1]։ Չինական ժողովրդական ռեսպուբլիկայում որակի համար տարվող պայքարը իրականացվում է մի ուրիշ եղանակով։ Պետությունը պետական ու կոոպերատիվ առևտրական կազմակերպություններին իրավունք է վերապահել ապրանքները դնել ընտրանքային եղանակով՝ նախապես իրը ուսումնասիրելով շուկայի կոնյուկտուրան, բացառությամբ որոշ ապրանքների, որոնց արտադրությունը դեռևս լիովին չի բավարարում շուկայի պահանջները և որոնք առևտրական ձեռնարկությունների միջև բաշխվում են պլանային կարգով։ Ռեումների իրականացման այդպիսի եղանակը հարկադրում է արդյունաբերությանը սիստեմատիկաբար բարձրացնելու արտադրվող ապրանքների որակը, ընդլայնելու ասորտիմենտը։

Արտադրության վրա սովետական առևտրի ներգործման կարևոր լծակ է հանդիսանում առևտրական կազմակերպությունների ու ձեռնարկությունների կողմից արդյունաբերությանը ներկայացվող ապրանքների արտադրության նախնական պատվերների սիստեմը։ Այդ սիստեմը վերականգնվեց մեզ մոտ 1951 թ.։ Ի տարբերություն 1927 թ. մինչև պատերազմը գործող սիստեմի, նա ունի մի շարք առավելություններ։ Հին սիստեմի պայմաններում ապրանքների արտադրության նախնական պատվերներն արդյունաբերական ձեռնարկություններին էին տրվում նախատեսվող ֆոնդերի միայն մի մասի համար, մինչդեռ, այժմ հնարավորություն է տրվում, որ առևտրական կազմակերպությունները պատվերներ տան ամբողջ նախատեսվող ֆոնդի համար, իհարկե, այն ապրանքների համար, որոնք մտնում են նախնական պատվերների սիստեմով նախատեսված ապրանքացանկի մեջ։ Ճիշտ է, սկզբնական շրջանում այս ապրանքացանկը նեղ էր, սակայն, ներկայումս գնալով այն ընդլայնվում է։

Ապրանքների նախնական պատվերների սիստեմի նպատակն է համապատասխանեցնել արտադրվող ապրանքների ասորտիմենտը բնակչության պահանջներին։ Դեռ 1927 թ. Կոմունիստական պարտիայի 15-րդ համագումարը իր որոշման մեջ նշել է, որ սովետական առևտուրը «...պետք է նպաստի բնակչության սպառողական պահանջարկի հաշվառմանը և այդ պահանջարկի պլանաչափ բավարարմանը՝ պատվերների սիստեմի միջոցով ժամանակին արդյունաբերությանը հայտեր ներկայացնելու եղանակով»[2]։

Ապրանքների նախնական պատվերների սիստեմը միաժամանակ հնարավորություն է ստեղծում պլանաչափ կերպով բաշխել ժողովրդական սպառման առարկաների արտադրությունը սոցիալիստական արդյունաբերական ձեռնար-

---

[1] Տե՛ս „Торговля за рубежом", 1957, стр. 12.

[2] «ՍՄԿԿ-Ն... բանաձևերում», 1953, 2-րդ մաս, էջ 584։

կությունների միջև, խուսափել հեռավոր ու հանդիպակաց փոխադրումներից, որովհետև հենց սկզբից որոշվում են ապրանքների ստացման աղբյուրներն և առաքման վայրերը։

Նախնական պատվերները կամ հայտերը տրվում են պլանով նախատեսված շուկայական ֆոնդերին համապատասխան՝ տարվա սկզբին։ Այն դեպքում, երբ այդ պատվերները ներկայացնելիս շուկայական ֆոնդերի չափերը պլանավորվող տարվա համար դեռ չեն իջեցվել, առևտրական կազմակերպությունները պատվերները տալիս են՝ ղեկավարվելով նախորդ տարվա ապրանքների շուկայական ֆոնդերի չափերով։ Առևտրական կազմակերպությունները, որոնց իրավունք է տրվում ներկայացնել ապրանքների նախնական պատվերներ, այդ պատվերները տալիս են կամ իրացնող մեծաքանակ առևտրի կազմակերպություններին կամ անմիջապես արդյունաբերական ձեռնարկություններին, որոնց հետ ունեն ապրանքամատակարարման համապատասխան պայմանագրեր։

Պրակտիկան ցույց է տալիս, որ ապրանքների նախնական պատվերների սիստեմի կիրառումը մեծ դեր է խաղում ինչպես ապրանքներ մատակարարելու, այնպես էլ ժողովրդական սպառման առարկաների որակը բարձրացնելու ու ասորտիմենտը ընդարձակելու գործում։

Ապրանքների արտադրության նախնական պատվերների սիստեմի կիրառումը մեծ պատասխանատվություն է դնում առևտրական կազմակերպությունների վրա, որոնք պարտավոր են մատակարարներին ներկայացնել բազմակողմանիորեն հիմնավորված պատվերներ։

Մինչև արդյունաբերական ձեռնարկությունների ու այլ մատակարարների հետ պայմանագրերի կնքելն ու պատվերների ներկայացնելը ռեսպուբլիկայի առևտրական կազմակերպությունները պարտավոր են խոր ու բազմակողմանի ուսումնասիրել բնակչության պահանջները, այս կամ այն շրջանի առանձնահատկությունները։ Նրանք պետք է օգտագործեն պահանջարկի ուսումնասիրման բոլոր մեթոդները, այն է՝ առևտրական բազաներում, պահեստներում ապրանքների առանձին տեսակների պաշարների ուսումնասիրումը, ձեռնարկության համապատասխան մատյաններում կամ գրքում սպառողների կողմից գրի առնված պահանջարկի ու առաջարկի ուսումնասիրումը և այլն։ Անհրաժեշտ է, որպեսզի հաճախ հրավիրվեն խորհրդակցություններ, որտեղ արտադրական ձեռնարկությունների ղեկավարների հետ միասին քննության առնվեն ապրանքների որակի, ասորտիմենտի, մատակարարման հետ կապված հարցերը։

Ապրանքների նախնական պատվերների մշակման ժամանակ, պետք է ապահովել առևտրի ստորին օղակների՝ մանրածախ ցանցի աշխատողների (խանութի, սեկցիայի և անկամ բաժնի վարիչների) մասնակցությունը, լսել ու հաշվի առնել նրանց առաջարկությունները, նկատի ունենալով, որ այդ աշխատողները գտնվում են ամենօրյա շփման մեջ սպառողների հետ, ավելի լավ գիտեն նրանց պահանջները։ Պետք է ամեն կերպ խուսափել ապրանքների նախնական պատվերների մեխանիկական կազմումից։ Ռեսպուբլիկայի առևտրական կազմակերպությունները պետք է գիտական հիմքերի վրա դնեն ապրանքների արտադրության նախնական պատվերների մշակման գործը և ուժեղացնեն պայքարը նրանց անթերի կատարման համար։